Վարչական գործ թիվ ՎԴ5/0066/05/18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՔՆՆԻՉ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

15.07.2020թ. ք.Երևան

Հայաստանի Հանրապետության
վարչական դատարանի վճիռ
(նախագահող դատավոր Էդվարդ Նահապետյան)

Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարանը
(այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) հետևյալ կազմով՝
նախագահող դատավոր՝ Կարեն Ավետիսյան,
դատավոր՝ Կարինե Բաղդասարյան,
դատավոր՝ Արման Թովմասյան,

մասնակցությամբ՝
պատասխանող Շիրակի մարզպետարանի,
(ներկայացուցիչ Ա.Սուվարյան),

քննելով ըստ հայցի <Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ> ՀԿ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) ընդդեմ Շիրակի մարզպետարանի՝ 2018 թվականի մարտի 23-ի թիվ Ե/2018-23.03/223 հարցմամբ հայցվող տեղեկատվությունը պատասխանողին տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին, վարչական գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (այսուհետ՝ Վարչական դատարան) 2019 թվականի փետրվարի 08-ի վճռի դեմ Շիրակի մարզպետարանի վերաքննիչ բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. <u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

Դիմելով Վարչական դատարան՝ հայցվորը պահանջել է պարտավորեցնել պատասխանողին տրամադրելու 2018 թվականի մարտի 23-ի թիվ Ե/2018-23.03/223 հարցմամբ հայցվող տեղեկատվությունը:

Վարչական դատարանի 2019 թվականի փետրվարի 08-ի վճռով հայցը բավարարվել է:

Նշված վճռի դեմ Շիրակի մարզպետարանի վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանի 2019 թվականի մարտի 29-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վերաքննիչ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. <u>Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Այսպես, ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածը երաշխավորում է յուրաքանչյուրին իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը, որը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը: Նշված իրավունքը բացարձակ իրավունք չէ և, ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան, կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածն ամրագրում է յուրաքանչյուրի տեղեկություն ստանալու իրավունքը: Վերջինիս բովանդակությունը հանգում է հետևյալին. յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունք: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է այդ իրավունքի սահմանափակման պայմանները, այն է՝ տեղեկություններ ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Նշված սահմանադրական նորմերի բովանդակությունից բխում է, որ պետական անվտանգության պաշտպանության իրավաչափ նպատակի համար տեղեկություններ ստանալու իրավունքի սահմանափակման հնարավորությունը թույլ է տալիս պետական իշխանությանը սահմանափակել այն տեղեկությունների մատչելիությունը, որոնց տարածումը կարող է վնաս պատճառել պետական անվտանգությանը: Այդ սահմանադրական նորմերին համահունչ <Տեղեկատվության ազատության մասին> ՀՀ օրենքի <Տեղեկատվության ազատության սահմանափակումները> վերտառությամբ 8-րդ հոդվածը սահմանափակում է այն տեղեկատվության մատչելիությունը, որը պարունակում է պետական, ծառայողական, բանկային կամ առևտրային գաղտնիք: Նշված հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք:

<Ծառայողական գաղտնիք> հասկացության բովանդակությունը սահմանված է <Պետական և ծառայողական գաղտնիքի մասին> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով: Այդ հոդվածի համաձայն՝ պետական գաղտնիքը ՀՀ ռազմական, արտաքին հարաբերությունների, տնտեսական, գիտատեխնիկական, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեության բնագավառների այն տեղեկություններն են, որոնք պաշտպանվում են պետության կողմից, և որոնց տարածումը կարող է ծանր հետևանքներ առաջացնել Հայաստանի Հանրապետության անվտանգության համար:

Ծառայողական գաղտնիքը նույն հոդվածի առաջին մասով նախատեսված բնագավառների այն տեղեկություններն են, որոնք պաշտպանվում են պետության կողմից, և որոնց տարածումը կարող է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության անվտանգությանը: Այդպիսի տեղեկությունները, որպես կանոն, պարունակում են պետական գաղտնիքի մաս կազմող տվյալներ, սակայն ինքնին չեն բացահայտում պետական գաղտնիքը:

Հիշյալ օրենքի 9-րդ հոդվածը, ըստ 2-րդ հոդվածով նախատեսված բնագավառների, առանձնացնում է պետական գաղտնիքի շարքին դասելու ենթակա տեղեկությունները: Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պետական և ծառայողական գաղտնիքի շարքին կարող են դասվել հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեության բնագավառի հետևյալ տեղեկությունները՝ հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեության ուժերի, միջոցների, աղբյուրների, մեթոդների, պլանների և արդյունքների, ինչպես նաև այդ գործունեության ֆինանսավորման մասին տվյալները, եթե դրանք բացահայտում են թվարկված տեղեկությունները: Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասում են պետական այն մարմինները, որոնց պաշտոնատար անձինք օժտված են տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու լիազորություններով: Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան՝ նման լիազորությամբ օժտված են, ի թիվս այլոց, հանրապետական գործադիր, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները: Օրենքի 12-րդ հոդվածի 6-րդ պարբերության համաձայն՝ պետական այն մարմինները, որոնց ղեկավարներն օժտված են տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու լիազորություններով, մշակում են գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերը, որոնցում ներգրավվում են պետական գաղտնիքի շարքին դասվող այն տեղեկությունները, որոնք տնօրինելու լիազորությամբ օժտված են իրենք, ինչպես նաև ծառայողական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունները:

<Պետական և ծառայողական գաղտնիքի մասին> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածին համապատասխան ՀՀ կառավարությունը 1997 թվականի օգոստոսի 19-ին ընդունել է <Տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքը դասելու լիազորություններով օժտված պետական մարմինների պաշտոնատար անձանց ցանկը հաստատելու մասին> թիվ 350-Ն որոշումը: Համաձայն ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 19-ի թիվ 350-Ն որոշմամբ հաստատված ցանկի 29-րդ կետի՝ տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքը դասելու լիազորություններով օժտված պետական մարմնի պաշտոնատար անձ է Հայաստանի Հանրապետության մարզպետը:

Վարչական դատարանը, վճիռ կայացնելիս, ճիշտ չի մեկնաբանել <Պետական և ծառայողական գաղտնիքի մասին> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը, մասնավորապես, 8-րդ մասը, որով սահմանված է բացառություն, երբ գերատեսչական ցանկում ընդգրկվող կոնկրետ տեղեկության վերտառությունը (անվանումը) ինքնին ամրագրման փաստի ուժով պետական կամ ծառայողական գաղտնիք է, այդ ցանկերը հրապարակման ենթակա չեն:

Տվյալ դեպքում մարզպետարանի գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը բացահայտում է պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների վերտառություններ (անվանումներ) և այդ կապակցությամբ <Պետական և ծառայողական գաղտնիքի մասին> ՀՀ օրենքով սահմանված կարգով գաղտնագրված է: Հայցվորի կողմից պահանջվող տեղեկատվության տրամադրումը կարող է ծանր հետևանքներ առաջացնել ՀՀ անվտանգության համար:

Նշված հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Վարչական դատարանի 2019 թվականի փետրվարի 08-ի վճիռը և փոփոխել՝ կայացնելով հայցը մերժելու վերաբերյալ նոր դատական ակտ:

3. <u>Գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Վերաքննիչ դատարանի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Քննելով բողոքը՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ այն ենթակա է բավարարման՝ հետևյալ հիմնավորմամբ:

Վերաքննիչ դատարանն ընդգծում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար:

Ըստ այդմ, Վերաքննիչ դատարանն արձանագրում է հետևյալ իրավական դիրքորոշումը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ պատասխանողին հասցեագրված 2018 թվականի մարտի 23-ի դիմումով, վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի մարտի 06-ի որոշումը, Կազմակերպությունը պահանջել է տրամադրել ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից սահմանված գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկի պատճենը:

Նշված դիմումով պահանջված տեղեկատվության տրամադրումը պատասխանողը 2018 թվականի մարտի 27-ի ակտով մերժել է՝ պատճառաբանելով, որ. <(...) ՀՀ Շիրակի մարզպետարանի գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը բացահայտում է պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների վերտառություններ (անվանումներ) և այդ կապակցությամբ <Պետական և ծառայողական գաղտնիքի մասին> ՀՀ օրենքով սահմանված կարգով գաղտնագրված է: Ուստի հիմք ընդունելով <Տեղեկատվության ազատության մասին> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջը՝ խնդրո առարկա տեղեկատվությունը Ձեզ չի կարող տրամադրվել:>:

Այսպես, ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների

միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:

Միաժամանակ տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները կարգավորում, տեղեկատվության ապահովման բնագավառում տեղեկատվություն տնօրինողների իրավասությունը, ինչպես նաև տեղեկություններ ստանալու կարգը, ձևերը և պայմանները սահմանում են <Տեղեկատվության մասին> ՀՀ օրենքով, որի 3-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացողությունները.

տեղեկատվության ազատություն՝ տեղեկությունն օրենսդրությամբ սահմանված կարգով փնտրելու և դա տեղեկատվություն տնօրինողից ստանալու իրավունքի իրականացում.

տեղեկություն՝ անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված և ձևավորված տվյալներ՝ անկախ դրանց տնօրինման ձևից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ).

տեղեկատվություն տնօրինող՝ տեղեկություններ ունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, պետական հիմնարկներ, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններ, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպություններ և դրանց պաշտոնատար անձինք:

(...):

<Տեղեկատվության ազատության մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը:

Միաժամանակ <Տեղեկատվության ազատության մասին> ՀՀ օրենքով նախատեսված են նաև այն տեղեկությունները, որոնց տրամադրումը ենթակա է մերժման: Մասնավորապես, նշված օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողը (...) մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա՝

1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք.

(...):

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ 2012 թվականի մարտի 06-ի որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ. *<(...) խոսքի ազատության իրավունքը ներառում է նաև տեղեկություններ փնտրելու և ստանալու ազատությունը: Հանրային տեղեկատվության մատչելիությունը ժողովրդավարության և հանրության առջև պատասխանատու պետական կառավարման թափանցիկության էական նախապայմաններից է: Հասարակական կարծիքի միջոցով իրականացվող ժողովրդավարական վերահսկողությունը խթանում է պետական իշխանության գործողությունների թափանցիկությունը և նպաստում պետական մարմինների ու պաշտոնատար անձանց հաշվետու գործունեությանը:*

Սահմանադրական այս իրավունքը, սակայն, բացարձակ չէ և ենթակա է սահմանափակման (...): Այս սահմանադրական արժեքի հարաբերակցությունն այլ սահմանադրական արժեքների հետ, մասնավորապես, պետական անվտանգության հետ, որոշում է դրա հնարավոր սահմանափակումների բնույթը: (...) պետական

անվտանգության պաշտպանության իրավաչափ նպատակի համար տեղեկություններ փնտրելու և ստանալու ազատության սահմանափակման հնարավորությունը թույլ է տալիս պետական իշխանությանը պետական կամ ծառայողական գաղտնիքի շարքին դասել և ըստ այդմ սահմանափակել այն տեղեկությունների մատչելիությունը, որոնց տրամադրումը կարող է վնաս պատճառել պետական անվտանգությանը: ՀՀ Սահմանադրության (...) հոդվածին համապատասխան <Տեղեկատվության ազատության մասին> ՀՀ օրենքի՝ <Տեղեկատվության ազատության սահմանափակումները> վերտառությամբ 8-րդ հոդվածը սահմանափակում է այն տեղեկատվության մատչելիությունը, որը պարունակում է պետական, ծառայողական, բանկային կամ առևտրային գաղտնիք:>:

Նկատենք, պետական և ծառայողական գաղտնիք եզրույթների բովանդակությունը բացահայտված է <Պետական և ծառայողական գաղտնիքի մասին> ՀՀ օրենքով, որի 2-րդ հոդվածի համաձայն՝ պետական գաղտնիքը Հայաստանի Հանրապետության ռազմական, արտաքին հարաբերությունների, տնտեսական, գիտատեխնիկական, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեության բնագավառների այն տեղեկություններն են, որոնք պաշտպանվում են պետության կողմից, և որոնց տարածումը կարող է ծանր հետևանքներ առաջացնել Հայաստանի Հանրապետության անվտանգության համար:

Ծառայողական գաղտնիքը սույն հոդվածի առաջին մասով նախատեսված բնագավառների այն տեղեկություններն են, որոնք պաշտպանվում են պետության կողմից, և որոնց տարածումը կարող է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության անվտանգությանը: Այդպիսի տեղեկությունները, որպես կանոն, պարունակում են պետական գաղտնիքի մաս կազմող տվյալներ, սակայն ինքնին չեն բացահայտում պետական գաղտնիքը:

<Պետական և ծառայողական գաղտնիքի մասին> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տեղեկությունների գաղտնագրումը պետական կամ ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների և այդպիսի տեղեկակիրների տարածման նկատմամբ սահմանափակումների կիրառումն է:

<Պետական և ծառայողական գաղտնիքի մասին> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ (...)

Պետական այն մարմինները, որոնց ղեկավարներն օժտված են տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու լիազորություններով, մշակում են գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերը, որոնցում ներգրավվում են՝

ա) պետական գաղտնիքի շարքին դասվող այն տեղեկությունները, որոնք տնօրինելու լիազորությամբ օժտված են իրենք.

բ) ծառայողական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունները:

Գերատեսչական ցանկերում նշվում են նաև ներգրավված տեղեկություններից յուրաքանչյուրի գաղտնիության աստիճանը: Այդ ցանկերը և դրանցում կատարվող փոփոխություններն ու լրացումները հաստատվում են պետական մարմինների համապատասխան ղեկավարների կողմից:

Գերատեսչական ցանկերը չեն գաղտնագրվում և ենթակա են հրապարակման, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանցում ընդգրկվող կոնկրետ տեղեկության վերտառությունը (անվանումը) ինքնին ամրագրման փաստի ուժով կարող է լինել

պետական կամ ծառայողական գաղտնիք: Այդպիսի տեղեկությունների գաղտնագրումն իրականացվում է սույն օրենքով սահմանված կարգով:

Փաստենք նաև, որ ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 19-ի թիվ 350-Ն որոշմամբ հաստատվել է տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքը դասելու լիազորություններով օժտված պետական մարմինների պաշտոնատար անձանց ցանկը, որի 29-րդ կետի ուժով տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքը դասելու լիազորություններով օժտված պետական մարմնի պաշտոնատար անձ է Հայաստանի Հանրապետության մարզպետը:

Վկայակոչված իրավադրույթների համակարգված վերլուծությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության մարզպետը (այդ թվում՝ ՀՀ Շիրակի մարզպետը) օժտված է տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու լիազորություններով, և ըստ այդմ՝ մշակում և հաստատում է գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերը: Ընդ որում, գերատեսչական ցանկերը չեն գաղտնագրվում և ենթակա են հրապարակման, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանցում ընդգրկվող կոնկրետ տեղեկության վերտառությունը (անվանումը) ինքնին ամրագրման փաստի ուժով կարող է լինել պետական կամ ծառայողական գաղտնիք:

Քննարկվող դեպքում մերժելով Կազմակերպության դիմումով պահանջվող ընդլայնված գերատեսչական ցանկերի պատճենի տրամադրումը՝ պատասխանողը նշել է, որ ընդլայնված գերատեսչական ցանկը բացահայտում է պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների վերտառություններ (անվանումներ): Փաստորեն, դիմումի մերժումը պատասխանողը պայմանավորել է <Պետական և ծառայողական գաղտնիքի մասին> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով ամրագրված հայեցակարգով, հետևապես Վերաքննիչ դատարանի գնահատմամբ մերժումն իրավաչափ է: Ըստ այդմ, հաշվի առնելով, որ քննարկվող դեպքում առկա չէ պետական մարմնի պաշտոնատար անձի հիմնավորումը կասկածի տակ դնելու որևէ որակյալ հանգամանք, ապա պետք է փաստել, որ Կազմակերպությանը չի կարող տրամադրվել նրա ակնկալած տեղեկատվությունը՝ <Տեղեկատվության ազատության մասին> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, <Պետական և ծառայողական գաղտնիքի մասին> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի վերջին պարբերությամբ ամրագրված պահանջի ուժով:

Նշվածի հաշվառմամբ Վերաքննիչ դատարանը հիմնավոր չի որակում հայցը բավարարման ենթակա լինելու վերաբերյալ Վարչական դատարանի եզրահանգումը:

Ինչ վերաբերում է Կազմակերպության փաստարկին, որ ՀՀ սահմանադրական դատարանը <Պետական և ծառայողական գաղտնիքի մասին> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ մասի՝ <Գերատեսչական ցանկերը գաղտնագրվում են և հրապարակման ենթակա չեն> դրույթը՝ այնքանով, որքանով չի վերաբերում գաղտնագրման ենթակա կոնկրետ տեղեկատվության, ճանաչել է ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 27-րդ և 43-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր, հետևապես Կազմակերպության համոզմամբ ակնկալված տեղեկատվությունը ենթակա է տրամադրման, ապա նախ՝ Վերաքննիչ դատարանն ընդգծում է, որ նշված որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է իրավական դիրքորոշում այն, որ. *<(...) Ինչ վերաբերում է այնպիսի հնարավոր իրավիճակներին, երբ գերատեսչական ցանկերում ընդգրկվող կոնկրետ տեղեկության վերտառությունն (անվանումը) ինքնին անխուսափելիորեն կարող է արդեն իսկ ամրագրման փաստի ուժով իրենից պետական*

գաղտնիք ներկայացնել, ապա նման դեպքերում օրենքից բխող գաղտնագրման սկզբունքներին, մասնավորապես, գաղտնագրման հիմնավորվածության սկզբունքին համապատասխան այն կարող է դիտարկվել որպես տեղեկություն, որի տարածումը ծանր հետևանքներ կարող է առաջացնել Հայաստանի Հանրապետության անվտանգության համար, և որպես կոնկրետ տեղեկություն գաղտնագրվել:>, հետո՝ <Պետական և ծառայողական գաղտնիքի մասին> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածում ՀՕ-21-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2013 թվականի մայիսի 05-ից) կատարված փոփոխությունների և լրացման արդյունքում նորմի 7-րդ մասը հանվել է և այն այլևս գործում է <Գերատեսչական ցանկերը չեն գաղտնագրվում և ենթակա են հրապարակման, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանցում ընդգրկվող կոնկրետ տեղեկության վերտառությունը (անվանումը) ինքնին ամրագրման փաստի ուժով կարող է լինել պետական կամ ծառայողական գաղտնիք: Այդպիսի տեղեկությունների գաղտնագրումն իրականացվում է սույն օրենքով սահմանված կարգով> լրացված 8-րդ մասով:

Ամփոփելով սույն դատական ակտում մատնանշված դիրքորոշումը՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ հայցը հիմնավոր որակելով՝ Վարչական դատարանը թույլ է տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ դատական սխալի հիմքով դատական ակտի բեկանման հիմքերն են նյութական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը, դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ նյութական իրավունքի նորմերը համարվում են խախտված կամ սխալ կիրառված, եթե դատարանը սխալ է մեկնաբանել օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտ: Իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նյութական իրավունքի նորմի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման:

Վերոգրյալ հիմնավորումներից բխեցված եզրահանգումից ելնելով՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Վարչական դատարանը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ, 27-րդ հոդվածների պահանջներին համապատասխան բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ չի գնահատել գործում եղած բոլոր ապացույցները, և չկիրառելով դրանց նկատմամբ կիրառելի իրավական ակտերը՝ եկել է սույն գործի լուծման վերաբերյալ սխալ եզրահանգման, հետևապես վերաքննիչ բողոքի փաստարկներն ու պատճառաբանությունները վերաքննիչ բողոքը բավարարելու, և ըստ այդմ՝ Վարչական դատարանի 2019 թվականի փետրվարի 08-ի վճիռը բեկանելու հիմք են:

Միաժամանակ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում և փոփոխում է վարչական դատարանի ակտը՝ կայացնելով նոր դատական ակտ, եթե վարչական դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից, իսկ բողոքարկված և չբեկանված մասով դատական ակտը թողնում է անփոփոխ:

Սույն դատական ակտում ամրագրված հիմնավորումներով և հաշվի առնելով, որ գործով հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս Վարչական դատարանի վճռի բեկանման արդյունքում կայացնելու նոր դատական ակտ, և նոր դատական ակտի կայացումն, ըստ էության, ողջամիտ ժամկետում գործի քննության երաշխավորության արտացոլումն է, այսինքն՝ դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից, ապա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ սույն դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով ամրագրված իր լիազորությունը:

Ամբողջ վերոշարադրյալի հիմքով Վերաքննիչ դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է և բավարարման ենթակա:

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին և հիմք ընդունելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ և 146-րդ հոդվածները՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Կազմակերպությունից հօգուտ պատասխանողի պետք է բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար՝ հաշվի առնելով, որ պատասխանողը վերաքննիչ բողոքի համար վճարել է պետական տուրք, իսկ բողոքը բավարարվում է, իսկ մնացած մասով դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ, 141-րդ, 144-146-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Շիրակի մարզպետարանի վերաքննիչ բողոքը բավարարել:

2. Թիվ ՎԴ5/0066/05/18 վարչական գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2019 թվականի փետրվարի 08-ի վճիռը բեկանել և փոփոխել.

<Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ> հասարակական կազմակերպության հայցն ընդդեմ Շիրակի մարզպետարանի՝ 2018 թվականի մարտի 23-ի թիվ Ե/2018-23.03/223 հարցմամբ հայցվող տեղեկատվությունը պատասխանողին տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին, մերժել ամբողջությամբ:

3. <Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ> հասարակական կազմակերպությունից հօգուտ ՀՀ Շիրակի մարզպետարանի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար վճարված պետական տուրքի փոխհատուցման գումար:

4. Մնացած մասով դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

Դատական ծախսերի բաշխման մասով սույն որոշումը կամովին չկատարվելու դեպքում՝ որոշումը կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ	ԴԱՏԱՎՈՐ	ԴԱՏԱՎՈՐ
ԿԱՐԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ	ԿԱՐԻՆԵ ԲԱԴԱԼՅԱՆ	ԱՐՄԱՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Սույն արտագրությունն ունի հինգ թերթ
2020 թվականի օգոստոսի 18-ին:
Հանձնաժողովի քարտուղար Գայանե Հովհաննիսյան